Արշավի մասնակցության պայմաններ և դրույթներ

1. Սույն թվականի հունիսի 19-ից մինչև սեպտեմբերի 19-ն ընկած ժամանակահատվածում պատվիրված Mastercard տեսակի քարտերի (այսուհետ՝ Քարտ), բացառությամբ MasterCard Business քարտի քարտապանների (այսուհետ՝ Քարտապան) համար Ինեկոբանկ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից իրականացվում է արշավ (այսուհետ՝ Արշավ):
2. Արշավի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը հասանելի է www.inecobank.am կայքում:
3. Բանկն իրավունք ունի ցանկացած պահի փոփոխություն կատարել սույն փաստաթղթում, որի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը կտեղադրվի www.inecobank.am կայքում:
4. Սույն Արշավի պայմանները տարածվում են միայն 19.06.2024 – 19.09.2024թթ. պատվիրված և ակտիվացված Քարտերի վրա:
5. Արշավի մասնակցությունը կատարվում է ավտոմատ կերպով՝ Քարտի ակտիվացման պահին և չի ենթադրում որևէ լրացուցիչ անդամավճար կամ այլ տեսակի վճարներ:
6. Արշավը նախատեսվում է իրականացնել երկու փուլով՝

6.1 Առաջին փուլ. սույն փաստաթղթի 4-րդ կետով սահմանված ժամանակահատվածում ձեռք բերված նոր Քարտերը կստանան 10% հետվճար 7-րդ կետով սահմանված խանութներից 19.06.2024թ.-ից մինչև 19.09.2024թ.-ն ընկած ժամանակահատվածում կատարված գնումների համար:

6.2 Երկրորդ փուլ. սույն փաստաթղթի 4-րդ կետին բավարարող Քարտապանները, 20.09.2024թ.-ից մինչև 20.11.2024թ.-ն ընկած ժամանակահատվածում միջազգային առցանց խանութներում յուրաքանչյուր ամիս նվազագույնը 40 ԱՄՆ դոլար (համարժեք արտարժույթ) վճարումներ իրականացնելու դեպքում, հնարավորություն կստանան մասնակցելու խաղարկությանը և շահելու սույն փաստաթղթի 8-րդ կետով սահմանված մրցանակներից մեկը:

7. Սույն Արշավի շրջանակում հետվճարը հաշվարկվում և Քարտապաններին է վճարվում միայն հետևյալ առցանց խանութներում (ամերիկայան վեբ կայքերից) կատարված վճարումների դիմաց.
   - Shein.com
   - Sephora.com
   - 6pm.com

- Tommy.com
- Calvinklein.com
- Puma.com
- Victoriassecret.com
- Asos.com
- Nike.com
- Jomashop.com

8. Սույն փաստաթղթի 6.2 կետով սահմանված խաղարկության մասնակցող Քարտապանների միջև կիրականացվի խաղարկություն և պատահականության սկզբունքով ընտրված
   - 1 Քարտապան կշահի ուղևորություն 2 անձի համար դեպի Աբու Դաբի
   - 10 Քարտապան կստանա մեկական 100$ արժեքով նվեր քարտ՝ Բանկի կողմից ընտրված ամերիկյան օնլայն խանութներից մեկում գնումներ կատարելու համար:
9. Սույն փաստաթղթի 6.1 կետով սահմանված հետվճարները տրամադրվելու են Քարտապանի քարտային հաշվին, որից գանձվելու և ՀՀ պետական բյուջե է վճարվելու եկամտահարկ՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափով:
10. Արշավի շրջանակում վճարման ենթակա հետվճարի գումարը Քարտային հաշվին վճարվում է հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20-ից հետո՝ 5 աշխատանքային օրերի ընթացքում:
11. Հետվճարի տրամադրման օրվա դրությամբ ժամկետից շուտ փակված Քարտերի դեպքում՝ կուտակված հետվճարի գումարը զրոյացվում է և ենթակա չէ վճարման Քարտապանին:
12. Արշավի շրջանակում 6.1 կետով սահմանված հետվճարը յուրաքանչյուր օրացուցային ամսվա համար չի կարող գերազանցել 20,000 ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը:
13. Արշավի շրջանակում 6.1 կետով սահմանված հետվճարը չի տրամադրվում չեղարկված գործարքների դիմաց:
14. Արշավի խաղարկությունը նախատեսվում է ամփոփել և մրցանակները Քարտապաններին տրամադրել մինչև 25.12.2024թ.-ը:
15. Արշավի ընթացքում հաղթող ճանաչված մասնակցի Քարտը խաղարկության պահին պետք է լինի գործող:

16. Արշավի ընթացքում հաղթողներին սույն փաստաթղթի 8-րդ կետով սահմանված մրցանակները տրամադրելու նպատակով Բանկի աշխատակիցը հեռախոսազանգի կամ էլեկտրոնային հասցեին ուղարկվող նամակի միջոցով կապ կհաստատի վերջիններիս հետ:
17. Յուրաքանչյուր հաճախորդ սույն Արշավին կարող է մասնակցել 1 անգամ միայն մեկ Mastercard տեսակի քարտով՝ Արշավի ընթացքում պատվիրված առաջին Քարտով:
18. Բանկի կողմից զեղծարար գործարքի վերաբերյալ հիմնավոր կասկած ունենալու պարագայում Քարտապանի մասնակցությունը կարող է անվավեր ճանաչվել: Զեղծարար գործարքի չափանիշները սահմանվում և որոշվում են Բանկի կողմից:
19. Ծրագրի շրջանակում կուտակված հետվճարների գումարը փոխանցվում է միայն Քարտապանի քարտային հաշվին և ենթակա չէ հանձնման երրորդ անձին:
20. Սույն փաստաթղթի 8-րդ կետում սահմանված ուղևորությունը կներառի 2 հատ էկոնոմ դասի ավիատոմս դեպի Աբու Դաբի (հետադարձով), հյուրանոցի 7 օրյա գիշերակաց և նախաճաշ 2 անձի համար 05.01.2025 – 05.04.2025թթ. ժամանակահատվածի համար :
21. Սույն փաստաթղթի 8-րդ կետում նշված նվեր քարտերի օգտագործման պայմանները սահմանվում են նվեր քարտը տրամադրող ընկերության կողմից:
22. Քարտապանները կարող են ստանալ սույն փաստաթղթի 8 կետում սահմանված մրցանակները մինչև 2025թ. հունվարի 31-ը: Նշված ժամկետից հետո մրցանակները ենթակա չեն տրամադրման:
23. 8-րդ կետով սահմանված նվեր քարտերի տրամադրման անհնարինության դեպքում Բանկի կողմից վերջիններս կփոխարինվեն համարժեք այլ նվերով:
24. Ինեկոբանկ ՓԲԸ աշխատակիցները և վերջիններիս փոխկապակցված անձինք կարող են մասնակցել սույն Արշավի միայն առաջին փուլին՝ հետվճարների ստացմանը, և չեն կարող մասնակցել Արշավի երկրորդ փուլին՝ խաղարկությանը:

Ինեկոբանկ ՓԲԸ մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքէջ՝ www.inecobank.am, կամ զանգահարել 010-510-510 հեռախոսահամարով:

Ինեկոբանկ ՓԲԸ-ն վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից: